Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

ԺԱՄԱՆՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈ /ԲՐԱԶԻԼԻԱ/

Ս ույն թվականի Հուլիսի 31-ին, տեղական ժամանակով ժամը 09.15-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ գավազանակիր Բագրատ աբեղա Գայստյանի, ժամանեց Սան Պաուլոյի /Բրազիլիա/ «Կուարիլիոս» միջազգային օդանավակայան: Փարիզում Նորին Սրբությանն էր միացել նաև Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի Առաջնորդ Տ. Գյուտ արքեպս. Նագգաշյանը:

Օդանավակայանում Վեհափառ Հայրապետին ջերմորեն դիմավորեցին Բրազիլիայոց Առաջնորդ Տաթև արքեպս. Ղարիբյանը, Արգենտինայի հայոց Առաջնորդ Տ. Գիսակ եպս. Մուրադյանը, Սան Պաուլո նահանգի կառավարչի պաշտոնական հանդիպումների պատասխանատուն, Բրազիլիայում Լիբանանի դեսպանը, Բրազիլիահայոց Ազգային ներկայացուցչական ժողովի և նորընտիր կենտրոնական վարչության անդամները՝ ազգային ավանդական բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչները, Արգենտինայի հայոց թեմի Կենտրոնական վարչության անդամ Նոդգար Փիրանյանը, թեմի Տեր Եվնիկ և Տեր Պողոս քահանաները և այլ ազգային, միութենական ներկայացուցիչներ:

Օդանավակայանի պատվո սրահում տեղի ունեցած ջերմ ընդունելությունից հետո Վեհափառ Հայրապետը անվտանգության ծառայության ներկայացուցիչների ուղեկցությամբ մեծ ավտոշարասյունով ուղևորվեց իջևանի համար հատկացված «Մաքսուդ Փլազա» հյուրանոց:

ԱՂՈԹՔ ԵՎ ՔԱՐՈԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 12.00-ին, փոքր հանգստից հետո, Վեհափառ Հայրապետը «Դուրյան» վարժարանի սաների կողմից քաղցրորեն հնչող «Հրաշափառ» շարականի հնչյունների ներքո մուտք գործեց Սան Պաուլոյի Առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցի, որտեղ խռնված հավատացյալ հայորդիների բազմությունը մեծ հուզումով և խանդավառությամբ էր սպասում իր Հոգևոր Հորը:

Սուրբ Գևորգ եկեղեցում Նորին Սրբությանը բարի գալուստ մաղթելու էին եկել Սան Պաուլոյի Կաթոլիկ հայերի հոգևոր պետ Վարդան եպս. Պողոսյանը, Ասորի Եկեղեցու հոգևոր հովիվ հայր Գաբրիել Դրհոն, Հայ Ավետարանականների պատվելին, թեմի կենտրոնական վարչության և Ազգային Ներկայացուցչական ժողովի անդամներ:

ՎԱՐՈՒԺԱՆ ԵՎ ՏԻՐՈՒՀԻ ԲՈՒՐՍԱՅԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՍԱՆ-ՊԱՈՒԼՈՅԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ԲԱՑՄԱՆ ՊԱՀԻՆ

Գոհաբանական աղոթքից և Առաջնորդ Տաթև սրբազանի բարի-գալստյան խոսքից հետո, Վեհափառ Հայրապետը իր անդրանիկ պատգամը տվեց Բրազիլիայի հայությանը, ինչպես նաև խոսքն ուղղեց ողջ լատինական Ամերիկայում բնակություն հաստատած հայ ժողովրդի կավակներին՝ հորդորելով ապրել Մայր Եկեղեցուն և Հայրենիքին սերտ կապվածությամբ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

«Սիրելի Սրբազան եղբայրներ, Բրազիլիո Հայոց Առաջնորդ Տեր Տաթև արքեպիսկոպոս, հարգարժան աշխարհական բարձրագույն ժողովների ներկայացուցիչներ, Ազգային Ներկայացուցչական Խորհրդի և Ազգային Կենտրոնական Վարչության անդամներ, սիրելի հոգևոր եղբայրներ՝ Հայ Կաթողիկե, Հայ Ավետարանական և Կաթոլիկ Եկեղեցու ներկայացուցիչներ և թանկագին հավատացյալներ Սան Պաուլոյի Սուրբ Գևորգ եկեղեցու,

Առաջին զգացումը, որ իմ հոգիի մեջ կծագի այս առավոտ, այդ զգացումն էր, որ իմ աչքերն ու շրթունքները դեպի երկինք ուղղեց՝ փառք տալու համար Աստծուն, որ ինձի շնորհեց այս հոգևոր և ազգային ապրումի այսքան հարստացուցիչ և քաջալերական, ներշնչողական պահը: Փառք և գոհություն Աստուծո՝ մեր Երկնավոր Հորը, որ այս օրը շնորհեց մեզ բոլորիս և ինձի տվավ կարելիությունը մեր բոլորի իբրև ազգային-քրիստոնեական Եկեղեցի մեր ծննդավայրեն՝ Մայր Աթոռ

Սուրբ Էջմիածնեն գալու և ձեր բոլորի հոգիին մեջ հավատքին ու Հայրենիքին զգացումները ողջունելու աշխարհագրականորեն միայն հեռավոր այս ափին վրա: Եվ, հետևաբար, իմ առաջին խոսքը, Աստուծո ուղղված փառաբանության խոսքեն ետքը ձեզի է ուղղված, սիրեցյալ հավատացյալ անդամներ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցվո:

Նախ, կուզեմ աղոթել առ Աստված ամբողջ Բրազիլիո երկրին և Սան Պաուլո քաղաքին համար, որպեսզի Աստված բնությամբ այսպես գեղեցկորեն օժտած այս գեղեցիկ երկիրը առավել ևս ծաղկեցնե հոգևոր, բարոյական, ընկերային, տնտեսական այն բոլոր առավելություններովը, որոնք կնպաստեն մարդկային երջանկության և մարդոց կյանքի առողջության: Թող Աստված օրհնե Բրազիլիո նախագահը, Սան Պաուլոյի կառավարիչը, քաղաքապետը և բոլոր քաղաքային իշխանության ներկայացուցիչները:

Երկրորդ, քանի որ ես առաջին անգամն է, որ կգտնվիմ և շրթներս կբանամ Հարավային Ամերիկայի այս հողին վրա որպես Կաթողիկոս Ամենայն Հայոց, ես կողջունեմ նաև ողջ հայ ժողովուրդը ամբողջ Հարավային Ամերիկայի տարածքին վրա, և անձի մեջեն Արժանթինի Հայոց մեր Առաջնորդին ամբողջ Արգենտինայի մեր ժողովուրդը, Ուրուգվայի մեր ժողովուրդը, որոնց այցելելու առիթը պիտի ունենամ, բայց որովհետև առաջին անգամ Հարավային Ամերիկայի հողին վրա կխոսիմ՝ Սուրբ Գևորգ եկեղեցիեն, կողջունեմ մեր երեք թեմերը անխտիր, այս օրհնյալ հողամասին վրա և կմաղթեմ, որ օրեօր հայոց կյանքը հոգևոր և ազգային, մշակութային և կրթական, ընկերային և բարեսիրական, երիտասարդական և ուրիշ տարածքներու մեջ աճի, զորանա և երջանկության աղբյուր դառնա մեր հայ անուշիկ փոքրիկներու համար, որոնք հավաքված են այստեղ:

Սիրելի եղբայրներ և քույրեր, ես կհիշեմ, 22 տարիներ առաջ այս երկրեն անցա, երեք օր այս երկիրը մնացի, բայց պետք է խոստովանիմ, որ եկեղեցին այնպես պայծառ չէր, ինչպես այսօր շքեղորեն կփայլի: Այս նյութեղեն պայծառությունը կուզեմ, որ ըլլա մեր հոգիի գեղեցկության, հոգիի արթնության, հավատքի զորության, ազգային գիտակցության պատկերը: Նյութեղեն այս քարը համապատասխան ըլլա մեր հոգեղեն ապրումներու զտության, բյուրեղության, մաքրության և վեհության: Ապրի՛ք, Եկեղեցին դո՛ւք եք, Եկեղեցին հավատացյալներու հավաքական այն ապրումն է Քրիստոսի հավատքով ներթափանցված, հոգիները զիրար կապող և զիրարմե Աստուծո կապող այն ապրումն է, որ նույնիսկ առանց նյութական պայմաններու կրնա արտահայտվիլ:

Եղիշեն ի՞նչ կրսե, երբ կներկայացնե Վարդանանց ճակատամարտը. Ամեն մեկ զինվորը իր մեջ Եկեղեցի մըն էր: Եկեղեցին հավատքը Աստուծո իր մեջ կապրե: Այսօր որքա՜ն ուրախ եմ, որ գալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն, կտեսնեմ մեր ժողովուրդը Բրազիլիո այս հողին վրա իր հավատքը ամուր և կենդանի պահած է և թող Աստված երկնքի մեջ երջանկացնե հոգին Ռըսխալային և բոլոր անոնց, որոնք այս երկիրը շեն պահեցին, Եկեղեցին շեն պահեցին և այսօր երկրի վրա չեն, բայց

երկինքեն կդիտեն մեզի: Այսօր, ձեր Առաջնորդի կողքին ես կողջունեմ ձեր եկեղեցական դասը և նորընտիր Ազգային Ներկայացուցչական Ժողովը և Ազգային Վարչության բոլոր անդամները: Երբեք չմոռնաք, որ ձեր առաջին տարին կզուգադիպի և կհամընկնի իմ այս անդրանիկ Հովվապետական այցելության հետ, և եթե օրեօր ծաղկուն չպահեք այս սուրբ եկեղեցին, այն ատեն իմ այս Հովվապետական այցելությունը իր նպատակին շատ ծառայած չըլլար: Հետևաբար, շնորհավորելով ձեզ կմաղթեմ, որ նորանոր նվաճումներով, օրեօր ավելի գեղեցիկ իրագործումներով մեր հայության դարավոր հավատքը պահեք առողջ, կենդանի և կենդանարար:

Սիրելի հավատացյալներ, ես ձեր մեջ կողջունեմ երեք սերունդներ. անոնք, որոնք երեց սերունդի անդամներն են՝ գաղթականներ, և կապրին իրենց կյանքի հարուստ շրջանը, բայց իբրև ծերության շրջան: Կողջունեմ ճերմակագլուխ մեր բոլոր հայրերը և մայրերը և կըսեմ. «Դո՛ւք, որ տեսաք մեր ժողովրդի տառապանքը, այսօր ամենեն ավելի երջանիկ ըլլալու իրավունքն ունիք, որովհետև դուք տեսաք մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը՝ տեսաք տառապանքը, որ Աստված օրհնեց մեր նոր Հայրենիքի ստեղծումով: Դո՛ւք, երեց սերունդի անդամներդ՝ հայրեր և մայրեր, երջանկագույնն ըլլալու իրավունքն ունիք, որովհետև տառապանքեն ետքը տեսաք մեր ազգի նոր երջանկությունը:

Երկրորդ՝ ձեր մեջ կողջունեմ միջին՝ չափահաս սերունդը: Անոնք, որոնք իրենց հայրերեն իրենց ուսերուն վրա ժառանգեցին ազգին ու Եկեղեցիին, մշակույթին ու Հայրենիքին ծառայելու նվիրականագույն պարտականությունը:

Եվ երրորդ՝ ես կողջունեմ մեր նոր սերունդը, անոնք, որոնք այլևս այստեղ ծնած և մեծցած սերունդն են Բրազիլիո երկրին և մշակույթին հետ սերտացած ըլլալով, որ բնական երևույթ է, կպահեն իրենց հայրերի ազգության գիտակցությունը և պետք է, որ այս սերունդին վրա մենք ամեն ճիգ թափենք, ամեն զոհողություն հանձն առնենք, եթե կուզենք, որ մեզ հետ մեր հայրերեն վիճակվածը մեզմով չվերջանա և գալիք սերունդներու մեջ հավերժանա:

Վերջին իմ խոսքը այս պահուն այն է, որ ես կբերեմ ձեզի մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն և վերանորոգյալ ու վերստին անկախացյալ մեր Հայրենիքեն: Այս պահուս կհիշեմ, երբ երեքշաբթի վաղ առավոտյան ժամը երեքին, երբ իջա Մայր տաճար, բոլոր սրբազանները, վարդապետները և սարկավագները հավաքվեցան շուրջս, համբուրեցի Էջմիածնի Սուրբ Սեղանը և հրաժեշտ տվեցի բոլորին այն խոստումով, որ ձեզ պիտի բերեմ մեր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վերանորոգության շունչը: Ամեն ասածներս կրնաք մոռնալ, բայց այս բառը չմոռնաք՝ վերանորոգություն: Կյանքը, եթե երբեք հարափոփոխ ընթացք մը չէ դեպի լավը, այդ կյանքը կյանք չէ: Կյանքը իմաստ չունի, եթե զարգացում չէ: Մայր Աթոռը 70 տարի ինչպես տոկաց: Աստված ուժ տվավ մեզի, հակառակ այդ տարիներու իշխանության բռնապետության

պայմաններու: Եվ այստեղ, անգամ մը ևս հարգանք կրնծայեմ իմ երջանկահիշատակ նախորդին՝ Վազգեն Ա անմոռանալի Կաթողիկոսին, որ 39 տարի տոկաց, պահեց Մայր Աթոռ-Սուրբ Էջմիածինը: Այն ժամանակները ուրիշ էին, այսօրը՝ ուրիշ: Այսօր մենք պարտավոր ենք նոր ուժերով դեպի ժողովուրդը երթալու, ժողովուրդին հետ քրիստոնեությունը ապրեցնելու: Ոչ թե սպասել, որ ժողովուրդը գա եկեղեցի, եկեղեցին՝ ինքն է, որ պիտի երթա դեպի ժողովուրդը:

Սիրելի հավատացյալներ, դուք երջանկագույն սերունդը նկատեք ձեզ, որովհետև իմ հայրիկը գերեզման գնաց առանց իր Հայրենիքին ազատությունը տեսնելու: Ապրեց, երգեց, պայքարեցավ, բայց չտեսավ: Ո՞ւր էինք և ո՞ւր հասանք. փառք Քեզ Տեր: Հիմա եղածը պետք է պահենք, որ Աստուծո տված այս մեծ շնորհը, պատմության բերած այս նոր դարձվածքը մեր Հայրենիքը զոհ չերթա այնպիսի չարիքներու, որոնց զոհ գնաց դարասկզբի մեր առաջին Հանրապետությունը: Այսօր դարը չփակած 1990-ի այս տասնամյակը ես կկոչեմ Հայոց Անկախության պսակումը: Բայց անկախությունն ու ազատությունը շնորհ մը ըլլալեն ավելի պարտականություն և մասնակցություն են: Ես եկած եմ ձեզ հիշեցնելու, որ օրեօր աճող մեր Հայրենիքի մեջ և օրեօր ծաղկող Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մեջ դուք զձեզ ներկա զգաք և այլևս Սփյուռք և Հայրենիք անջատումը կամաց-կամաց նոսրանա և մենք կարենանք զգալ մեզ իբրև մեկ էության, մեկ ամբողջության մասնիկները: Ահավասիկ, այս սրտով ես եկած եմ բերելու համար ձեզ նոր շունչը՝ վերակենդանության շունչը: Եվ Աստված օրհնե ձեզ, որպեսզի պահեք ձեր այդ հավատարմությունը, կենդանի կապվածությունը վասն փառաց Աստուծո, վասն պայծառության Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և շինության, ամրության, զորության ու զարգացման Հայրենյաց մերոց՝ Հանրապետությանն ազգիս Հայոց, հավիտյանս հավիտենից: Ամեն»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԴՈՒՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Սուրբ Գևորգ եկեղեցում հավաքված մեծաթիվ ժողովրդի հետ հանդիպումից հետո, Վեհափառ Հայրապետն այցելեց եկեղեցու հարևանությամբ գտնվող Ազգային «Դուրյան» վարժարան՝ հանդիպելու համայնքի ամենակրտսեր ներկայացուցիչների հետ:

Ներկայացված հայտագրից հետո Նորին Սրբությունը, կրուցելով փոքրիկներին մատչելի լեզվով, մտերմացավ նրանց հետ՝ խոսեց Հայ Եկեղեցու, Հայաստանի և հայ ժողովրդի պատմության մասին, բացատրելով նրանց հայրերի հավատքին, լեզվին հարազատ մնալու անհրաժեշտությունը, պատգամելով է՛լ ավելի կորացնել մայրենի լեզվի իմացությունը:

Վեհափառ Հայրապետի օրհնությունից հետո տեղի ունեցավ «Աջահամբույր», որի ընթացքում Նորին Սրբությունը ծանոթացավ թեմի

Կենտրոնական Վարչության, ակգային գործիչների, համայնքային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՄԱՐԻՈ ԳՈՎԱՍԻ ՀԵՏ

Երեկոյան ժամը 16.00-ին Վեհափառ Հայրապետը Սան Պաուլոյի նահանգապետարանում հանդիպեց Սան Պաուլո նահանգի կառավարիչ Մարիո Գովասի հետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՐԻՈ ԳՈՎԱՍԻ ՀԵՏ

Կառավարիչը շնորհակալություն հայտնեց Հայոց Հայրապետին՝ իր այցելությամբ Սան Պաուլո նահանգին և քաղաքին ընծայած մեծ պատվի համար: Ապա նա մեծ դրվատանքով արտահայտվեց տեղի հայ բնակչության մասին, որպես թե՛ նահանգի և թե՛ քաղաքի ընդհանուր կարգացմանը մեծ նպաստ բերող մի աշխույժ համայնքի:

Իր հերթին Վեհափառ Հայրապետը, գնահատելով կառավարչի այս ջերմ ընդունելությունը, շեշտեց Հայաստանի և Բրազիլիայի սերտ համագործակցության անհրաժեշտությունը, ինչպես նաև նկարագրեց և ներկայացրեց Սուրբ Էջմիածնի նորոգության շարժումը խորհրդային վարչակարգի 70-ամյա ծանր կացությունից հետո:

Վերջում Նորին Սրբությունն ու Մարիո Գովասը փոխանակեցին հուշանվերներ:

ԸՆԹՐԻՔ-ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհափառ Հայրապետը հյուրանոցի դահլիճներից մեկում, ընթրիքի սեղանի շուրջ, խորհրդակցական հանդիպում ունեցավ թեմի նորընտիր Կենտրոնական վարչության 40 անդամների հետ:

Խոսք առնելով, Առաջնորդ Տաթև սրբազանը ողջունեց Վեհափառ Հայրապետի ներկայությունը և հանուն Բրազիլիայի հայ ժողովրդի շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ հրավիրելով նրան իր խորհուրդներով ավելի նպատակամղել և ուղղել Կենտրոնական Վարչության գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը, մի շարք վերլուծումներ կատարելով աշխատանքի նվիրումի և ինքնընծայման մասին, կարևորեց կամավոր հանձնառության գաղափարը՝ շեշտելով, որ անտարբերությունն ու անհոգությունը և միայն նեղ անձնական շահով, առանց ընդհանուրին՝ Եկեղեցուն, Հայրենիքին, ապգին սեփական կյանքից բաժին հանելու ապրելը հավասարապոր է չապրելու: Ապա Նորին Սրբությունը կոչ արեց բարոյական և նյութական ոչ թե օգնություն կամ օժանդակություն, այլ մասնակցություն և արտակցություն ունենալ՝ Եկեղեցու և Հայրենիքի շինության գործին:

Հանուն Կենտրոնական Վարչության շնորհակալության և բարիգալստյան խոսքով հանդես եկավ թեմի Ներկայացուցչական Ժողովի ատենապետ և «Հայաստան» հիմնադրամի հանձնախմբի նախագահ Պրն. Վարուժան Բուրմայանը:

Ապա Վեհափառ Հայրապետի հուսկ բանքով և ծավալված աշխույժ երկխոսությամբ էլ ավարտվեց այս հանդիպումը:

1 ՕԳՈՍՏՈՍ, ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

Օգոստոսի 1-ին, ժամը 10.00-ին, Վեհափառ Հայրապետը իր հարկաբաժնում հարցազրույց ունեցավ Բրազիլիայի ամենահայտնի «Իստո Է» շաբաթաթերթի թղթակցի հետ: Շուրջ 45 րոպե տևած հարցազրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը հանգամանալից և հակիրճ կերպով ներկայացրեց Հայ Եկեղեցու սկզբնավորման պատմությունը, նրա կատարած դերը ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակույթի մեջ, դավանանքը, ինչպես նաև խոսելով ներկա ժամանակներում Հայաստանի ապատության և անկախության պայմաններում ստանձնած առաքելության և դերի մասին, ասաց, թե ժողովուրդը, պետությունը ապրում են ոչ միայն տնտեսական և ընկերային հատկանիշներով, այլև բարոյական և հոգևոր արժեքներով, որոնց կրողն է Հայ Եկեղեցին:

Նորին Սրբությունը խոսեց նաև միջեկեղեցական կյանքի աշխուժացման կարևորության մասին՝ շեշտելով, որ Հայ Եկեղեցին միշտ եղել է այդ շարժման կորացման ջատագովներից մեկը: Վեհափառ Հայրապետը մանրամասնորեն անդրադարձավ Հայաստանի անկախությանը՝ նրա բերած բարիքներին, անցած դժվարին ուղուն, տնտեսական ծանր պայմաններին, որոնցում սակայն կամաց-կամաց, աստիճանաբար կանոնավորվում է կյանքը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԲԸՄ ԵՎ «ԱՌԵՆ ԵՎ ՎԻՐԺԻՆԱ ԲԱԶԱՐՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆ

Առավոտյան ժամը 10.00-ին Վեհափառ Հայրապետը իր շքախմբով այցելեց Սան Պաուլոյի ՀԲԸՄ և նրա հովանավորությամբ գործող «Առեն

և Վիրժինա Բապարյան» վարժարան: Վարժարանի շեմին, ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, Նորին Սրբությունը մուտք գործեց հանդիսությունների սրահ, որտեղ ողջ աշակերտությունը Բրազիլիայի և Հայաստանի Հանրապետության դրոշների ծածանումով ու խանդավառ ծափողջույններով դիմավորեց Հայոց Հայրապետին: Երկու պետությունների օրհներգերի երգեցողությանը հաջորդեց աշակերտության ներկայացրած հատուկ հայտագիրը, որին մասնակցում էին նաև «Մարի Մանուկյան» մանկապարտեզի փոքրիկները: Այնուհետև ողջույնի և բարիգալստյան խոսքով հանդես եկավ Սան Պաուլոյի ՀԲԸՄ-ի ատենապետ տիար Ժորժ Ֆեր-Հարությունյանը:

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԵՏ

Ապա ՀԲԸՄ վարչության անդամներին և վարժարանի աշակերտությանն իր հայրական օրհնությունները տվեց Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը իր խոսքի սկզբում նախ հարգանքի տուրք մատուցեց և աղոթեց առ Աստված ՀԲԸՄ ցկյանս նախագահ, ազգային մեծ բարերար Ալեք Մանուկյանի հիշատակին, ապա բարձրորեն գնահատեց ՀԲԸՄ վարչության անդամներին իրենց կատարած աշխատանքի համար: Այնուհետև Վեհափառ Հայրապետը պարզ և մատչելի լեզվով ու ոճով խոսք ուղղեց երեխաներին՝ պատգամելով հայոց լեզվի ուսուցումով լինել հավատարիմ ցավակները Մեսրոպ Մաշտոցի:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շրջեց վարժարանի շենքում՝ դիտելով և ծանոթանալով մասնաբաժիններին: Վերջում տեղի ունեցավ Աջահամբույր, որով ՀԲԸՄ վարչության անդամներն ու աշակերտությունը իրենց հարգանքն արտահայտեցին Հայոց Հայրապետի նկատմամբ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՀՕՄ-Ի «ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՈՒՆ»

ՀԲԸՄ այցելությունից հետո, ժամը 12.30-ին, Վեհափառ Հայրապետն այցելեց ՀՕՄ-ի «Հանգստյան Տուն», որտեղ մեծ բազմություն էր հավաքվել Նորին Սրբությանը դիմավորելու համար: Նորին Սրբությանը դիմավորեցին ՀՕՄ-ի Տիկնանց Միության ատենապետուհի տիկ. Վիկտորիա Բանջարյանը և Միության անդամները: Վեհափառ Հայրապետը այստեղ հանդիպեց ՀՕՄ-ի խնամակալության ներքո գտնվող հայ տարեց սերնդի ներկայացուցիչների հետ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԵՏ

Նորին Սրբությունը իր խոսքում գեղեցիկ կերպով ներկայացրեց ՀՕՄ-ի ծաղած աշխատանքները հայ մամիկներին և պապիկներին անմնացորդ և առանց վարձի ակնկալիքի ծառայելու և խնամելու գործում, որ Աստվածահաճո և հայրենասեր մի ինքնընծայում է, որին լծվել են ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ նաև այստեղ՝ Սան Պաուլոյում, ՀՕՄ-ի անընկճելի Տիկնանց Միությունները:

Այնուհետև, Վեհափառ Հայրապետը խոսքն ուղղելով երեց սերնդի ներկայացուցիչներին ասաց, որ իրենք, գաղթական սերունդ լինելով, այսօր ամենաերջանիկն են, որովհետև իրենց տառապանքն ու թափած արյունը արդյունավորվել է ապատ ու անկախ Հայաստանով և շղթաներից ձերբազատված Սուրբ Էջմիածնով. «Ժամանակին երգված ապատությունը, այսօր գործով է արտահայտվում», - եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

ԸՆԹՐԻՔ-ՃԱՇԿԵՐՈՒՅԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՆԸ

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհափառ Հայրապետը ընթրիքի հյուրն էր վաղեմի բարեկամ և հայտնի ապգային Ներես և Լենա Վարդանյանների:

Այս մտերմական ընդունելությանը ներկա էին համայնքի բոլոր

հայտնի դեմքերը, կազմակերպությունների, միությունների ներկայացուցիչներ՝ թվով շուրջ 120 հոգի: Այն անցավ շատ ջերմ և արտամոտ մթնոլորտում, որի ընթացքում Ներսես Վարդանյանը, ի պատիվ Վեհափառի այցելության, շուրջ 50.000 դոլլարի նվիրատվություն կատարեց՝ ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Զանազան չափերի՝ հինգից մինչև քսան հազար դոլլարի հասնող նվիրատվություններ կատարեցին նաև մյուս ազգայինները՝ իրենց նպաստն ու մասնակցությունը բերելով Մայր Աթոռի կորացման և ծաղկման, ինչպես նաև Հայաստանում մի քանի խոնարհված եկեղեցիներ վերականգնելու, վերակենդանացնելու գործին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԲԱՐԵՐԱՐ ՆԵՐՍԵՍ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Վերջում իր հայրական օրհնությունն ու շնորհակալությունը հայտնելով, Վեհափառ Հայրապետը հավաստիացրեց, որ նվիրաբերված միջոցները պիտի ծառայեն այն նպատակին և ծրագրերի իրականացմանը, որոնք այսօր ծառացած են Մայր Աթոռի առջև:

2 ՕԳՈՍՏՈՍ, ՈՒՐԲԱԹ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՊԱՈԼՈ ՄԱԼՈՒՖԻԻ ՀԵՏ

Առավոտյան ժամը 09.30-ին Վեհափառ Հայրապետին քաղաքապետարանում ընդունեց Սան Պաուլոյի քաղաքապետ Պաուլո Մալուֆին: Մուտքի մոտ պաշտոնական դիմավորումից հետո, Նորին Սրբությունն առաջնորդվեց ընդունելությունների սրահ, որտեղ Վեհափառ Հայրապետին էր սպասում քաղաքապետը իր աշխատակիցներով և օգնականներով:

Հայոց Հայրապետին ուղեկցում էին Տաթև, Գյուտ և Գիսակ սրբազանները, գավազանակիր Բագրատ աբեղան, թեմի երկու քահանաները, Ազգային Ներկայացուցչական Ժողովի և Կենտրոնական Վարչության անդամները՝ գլխավորությամբ Ազգային Ներկայացուցչական Ժողովի ատենապետ պրն. Վարուժան Բուրմայանի և Կենտրոնական Վարչության ատենապետ Բենիամին Դիլչեկեյանի:

Հանդիպումն իր ողջ պաշտոնականությամբ հանդերձ չափազանց մտերմիկ էր: Քաղաքապետ Մալուֆին Վեհափառ Հայրապետին հանձնեց այն որոշումը, ըստ որի քաղաքի ամենաբանուկ մասում պիտի կառուցվի կամուրջ «Հայաստանի Հանրապետություն» անունով: Ապա Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Եկեղեցու և Հայաստանի ներկա կացությունը՝ հույս և ցանկություն հայտնելով, որ Սան Պաուլոն բարեկամանա և համագործակցի Հայաստանի որևէ քաղաքի հետ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԲՐԱԶԻԼԻԱՅՈՒՄ

Նույն օրը, ժամը 12.00-ին, Վեհափառ Հայրապետը հատուկ հատկացված ինքնաթիռով, շուրջ 70 ազգայինների ընկերակցությամբ, Սան Պաուլոյից մեկնեց մայրաքաղաք Բրազիլիա՝ պաշտոնական հանդիպումներ ունենալու երկրի Նախագահ Ֆերնանդո Կարդոսոյի, արտգործնախարարի և քաղաքապետի հետ:

Ժամը 13.15-ին ժամանելով մայրաքաղաքի «Բրազիլիա» օդանավակայան, Նորին Սրբությունը դիմավորվեց նախագահի հատուկ ներկայացուցիչ, Ֆինանսների նախարար հայազգի Անտոնիո Կանդիրի և պաշտոնական այլ անձանց կողմից:

ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՍՐԱՀ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Հ. 36280, 2 Օգոստոսի 1996

Որոշում է մի հանրային վայրի անվանակոչությունը

ՊԱՈԼՈ ՄԱԼՈՒՖ, Սան Պաուլոյի քաղաքապետ, օգտվելով օրենքի սահմանած կարգից, Սան Պաուլոյի քաղաքապետարանի օրենքի 70-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն,

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հոդված 1. Ավենիդա դոս Բանդեյրանտեզ և Ավենիդա դաս Նատոնզ Ունիդաս պողոտաները կապող կամուրջը, Իտաիմ Բիբի շրջանում, անվանակոչել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:

Հոդված 2. Սույն հրամանագրի գործադրման համար նախատեսվող ծախսերը փակվելու են բյուջետային հատկացումներով:

Հոդված 3. Այս հրամանագիրը ուժի մեջ կմտնի իր հրապարակման օրվանից, չեղյալ համարելով հակառակ տրամադրությունները:

ՍԱՆ ՊԱՈՒԼՈՅԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ, 2 Օգոստոսի, 1996, Սան Պաուլոյի հիմնադրման 443 տարի:

ՊԱՈՒԼՈ ՄԱԼՈՒՖ
ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԵՐԿՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Օդանավակայանից Վեհափառ Հայրապետը իր ողջ շքախմբով առաջնորդվեց դեպի արտգործնախարարություն, որտեղ հանդիպեց արտգործնախարար Լուիզ Ֆիլիպ Լամպեյային:

ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՊԱՀԻՆ

Նրա հետ փոքրիկ առանձնակրույցից հետո Նորին Սրբությունը առաջնորդվեց մեծ դահլիճ, որտեղ արտգործնախարարը, հանուն երկրի նախագահ Ֆերնանդո Կարդոսոյի, ի ներկայության պետական պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագետների և Սան Պաուլոյից Վեհափառ Հայրապետին ուղեկցող հայ համայնքի ներկայացուցիչների հսկա բազմության, Նորին Սրբությանը հանձնեց Բրազիլիայի բարձրագույն շքանշանը:

Վեհափառ Հայրապետը, շնորհակալություն հայտնելով իրեն ընծայված այս մեծ պատվի և հարգանքի համար, իր հերթին արտգործնախարարին նվիրեց «Գանձեր» շքեղապարդ այբոմը և Հայաստանի Հանրապետության արծաթյա հուշադրամներ:

PREFEITURA DO MUNICÍPIO DE SÃO PAULO

GABINETE DO PREFEITO

"FAC-SÍMILE"

DECRETO Nº 36.280 , DE 02 DE agosto DE 1996

Dispõe sobre denominação de logradouro público.

PAULO MALUF, Prefeito do Município de São Paulo, usando das atribuições que lhe são conferidas por lei, nos termos do Inciso XI do artigo 70 da Lei Orgânica do Município de São Paulo,

D E C R E T A:

Art. 1º - Fica denominado VIADUTO REPÚBLICA DA ARMÊNIA - Código CADLOG 47.094-5, viaduto que estabelece a ligação da Avenida dos Bandeirantes com a Avenida das Nações Unidas (Setor 085 - Quadra 657 e Setor 299 - Quadras 087, 009 e 042 - AR/PI), situado no Distrito do Itaim Bibi - IBI.

Art. 2º - As despesas com a execução do presente decreto correrão por conta das dotações orçamentárias próprias.

Art. 3º - Este decreto entrará em vigor na data de sua publicação, revogadas as disposições em contrário.

PREFEITURA DO MUNICÍPIO DE SÃO PAULO, aos 02 de agosto de 1996, 443º da fundação de São Paulo.

PAULO MALUF
PREFEITO

O Presidente da República Federativa do Brasil, Grão-Mestre da Ordem Nacional do Cruzeiro do Sul, houve por bem outorgar a Sua Santidade Kardelit I, Patriarca da Igreja Apostólica Armênia,

o grau de Grã-Cruz da mesma Ordem, por Decreto de 29 de julho de 1956.

E para constar, mandou expedir-lhe o presente diploma, que vai por mim assinado e selado com o sêlo da Ordem.

Brasília, 30 de julho de 1956; 175º da Independência e 68º da República.

Chancelar da Ordem

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՇՔԱՆՇԱՆԻ ՎԿԱՅԱԳԻՐԸ

Բրազիլիայի Դաշնակցային Հանրապետության Նախագահը, Գերագույն Հեղինակությունը Կրուզեյրո դո Սուլ Ազգային Շքանշանի, արժանի է նկատել վերոհիշյալ շքանշանի Մեծ Խաչի աստիճանը շնորհել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Պատրիարքին, 1996 թ. Հուլիսի 29-ի հրամանագրով:

Ի հաստատումն վերոհիշյալի, որոշել է հանձնել սույն վկայականը, ստորագրված իմ կողմից և դրոշմված շքանշանի կնիքով:

Բրազիլիա, 1996թ. Հուլիսի 30, Անկախության 175-րդ տարի և Հանրապետության 108-րդ տարի:

Ստորագրություն
Դիվանապետ Շքանշանի

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ ՖԵՐՆԱՆԴՈ ԷՆՐԻԿԵ ԿԱՐԴՈՍՈՅԻ ՀԵՏ

Արտաքին գործերի նախարարությունում այս հանդիսավոր արարողությունից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց նախագահական «Պլանալտո» պալատ՝ հանդիպելու երկրի նախագահ Ֆերնանդո Էնրիկե Կարդոսոյի հետ:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ժամը 16.00-ին Ամենայն Հայոց Հայրապետը, ընկերակցությամբ Առաջնորդ Տաթև սրբազանի, դոկտ. Վարուժան Բուրմայանի, ընդունվեց նախագահ Ֆերնանդո Կարդոսոյի կողմից: Շուրջ 15 րոպե տևած

առանձնակրությունից հետո ընդունելությունների մեծ դահլիճում՝ ի դիմաց պետական պաշտոնական, դիվանագիտական ներկայացուցիչների, հայ համայնքի անդամների և բազմաթիվ թղթակիցների Վեհափառ Հայրապետը կրկին անգամ շնորհակալություն հայտնելով իրեն ընծայված մեծ պատվի համար, նախ փոխանցեց << նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի ողջույնները, ապա իր հերթին Նախագահ Ֆերնանդո Էնրիկեին պարգևատրեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Այս առթիվ նախագահ Ֆերնանդո Էնրիկեն, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին, խոսեց Բրազիլիայի հայության հոգևոր հավատարիմ և աշխատասեր քաղաքացիներ լինելու մասին. «Ես շատ ճիշտ համարեցի Անտոնիո Կանդիրի նման մեկին, որ հայ է, նշանակել ֆինանսների նախարար, որովհետև հայերը հաշվի մեջ շատ լավ են և խելացիորեն են ծախսում»: Հիշելով հայ ժողովրդի ազատության և անկախության պայքարը, նախագահն ասաց, որ «ազատությունը թթվածնի նման է, որ հարգվում է միմիայն այն ժամանակ, երբ պակասում է»: Վերջում նախագահ Կարդոսոն խնդրեց Վեհափառ Հայրապետին իր ողջույնները փոխանցել << նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԾՐՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԵՏ

Երկրի նախագահի հետ հանդիպումից հետո Վեհափառ Հայրապետը ժամը 16.45-ին հանդիպեց Բրազիլիայի կառավարիչ Քրիստովամ Բուարկեի հետ նրա առանձնատանը: Այստեղ, ավելի մտերմական կրույցից հետո, կառավարչի տան ընդարձակ բակում պաշտոնական կերպով պրն. Բուարկեն ընթերցեց այն որոշումը, ըստ որի մայրաքաղաք Բրազիլիայում հող էր հատկացվում Հայաստանի Հանրապետության դեսպանատան կառուցման համար: Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց այս որոշման կապակցությամբ՝ հույս հայտնելով, որ << դեսպանատունը շուտափույթ կերպով կկառուցվի, և այսպիսով երկու երկրների միջև հարաբերությունները առավել ևս կսերտանան:

ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ԳԻՐ

Ներկայով, Դաշնակցային Վարչական Ծրջանի Կառավարությունը պատիվն ունի պայմանավորվելու ընթացքի մեջ դնել նվիրատվությունը մի հողամասի, Դեսպանությունների Հյուսիսային Ծրջանում, կառուցելու համար Բրազիլիայում Հայաստանի Հանրապետության Դեսպանության ապագա նստավայրը, հարգելով ուժի մեջ եղող օրինական տրամադրությունները:

Վերոհիշյալ հողամասի վայրի ճշտումը ենթակա է Դաշնակցային Վարչական Ծրջանի Խորհրդարանի և Պատմության ու Արվեստի Արժեքների Հաստատության վավերացմանը:

Բրազիլիա, 2 Օգոստոս 1996

Քրիստովամ Բուարկե

Դաշնակցային Վարչական Ծրջանի Կառավարիչ

TERMO DE COMPROMISSO

Pelo presente, o Governo do Distrito Federal tem a honra de comprometer-se a promover a doação de um terreno, sito no Setor de Embaixadas Norte, para a construção da futura sede da Embaixada da República da Armênia em Brasília, respeitadas as disposições legais vigentes.

A alocação do citado terreno deverá ser submetida à aprovação da Câmara Legislativa do Distrito Federal e do Instituto do Patrimônio Histórico e Artístico Nacional.

Brasília, 02 de agosto de 1996

CRISTOVAM BUARQUE
Governador do Distrito Federal

ՎԵՐԱԴԱՐՁ ՍԱՆ ՊԱՈՒԼՈ

Այս շատ կարևոր պաշտոնական հանդիպումներից հետո, որոնց ընթացքում իր անձով բարձրորեն և ըստ արժանվույն ներկայացնելով թե՛ Հայ Եկեղեցին և թե՛ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, Նորին Սրբությունը ժամը 17.30-ին նույն բակմամարդ շքախմբով վերադարձավ Սան Պաուլո:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ «ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ»

Երեկոյան ժամը 21.30-ին «Հայկական Ակումբում» Վեհափառ Հայրապետը հանդիպեց հայ երիտասարդության հետ: Շուրջ 400-ի հասնող երիտասարդ-երիտասարդուհիներ, հայ վարժարաններ սաներ, ինչպես նաև համայնքի զանազան տարիքի անդամներ ծափողջույններով և խանդավառությամբ դիմավորեցին Հայոց Հայրապետին:

«Հայկական Ակումբի» ատենապետ պրն. Փանոս Ներսիսյանը Վեհափառ Հայրապետի հետ միասին շրջելով, Նորին Սրբությանը ծանոթացրեց Ակումբի բոլոր մասնաշենքերին՝ «Լևոն Տեր-Պետրոսյանի» անվան նոր բացված մարզասրահ, գրադարան, հյուրասրահ: Սպա Վեհափառ Հայրապետն առաջնորդվեց Ակումբի մեծ դահլիճ, որտեղ տեղի ունեցավ հանդիպում երիտասարդության հետ:

Բացման խոսքով հանդես եկավ պրն. Փանոս Ներսիսյանը՝ ողջունելով Նորին Սրբության ներկայությունը «Հայկական Ակումբ»-ից ներս:

Սնուհետև երիտասարդությանն իր հայրական խոսքն ուղղեց Վեհափառ Հայրապետը՝ խոր վերլուծումներ կատարելով երիտասարդության և ընդհանրապես կյանքի մասին, շեշտելով, որ երիտասարդություն հասկացությունը թիվ և սահման չի ճանաչում, այն ապրելու եղանակ է և տարիքը չէ այդ սահմանումի որոշողը. «Երիտասարդը, որ տեսիլք կամ նպատակ չունի, երիտասարդ չէ: Երիտասարդը նա է, ով ունի այդ տեսիլքն ու կյանքը արժևորելու ձգտումն ու նպատակը: Ըստ լատինական առածի, «կյանքը սոսկ ապրելը չէ, այլ արժևորելով ապրելը»:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց երիտասարդության կողմից իրեն ուղղված հարցերին՝ Սփյուռքի և Հայաստանի երիտասարդության հարաբերությունների և փոխօգնության ձևերի և միջոցների մասին:

3 ՕԳՈՍՏՈՍ, ՇԱԲԱԹ

Օգոստոսի 3-ի առավոտյան ժամը 09.30-ից մինչև ժամը 12.00-ը Վեհափառ Հայրապետը իր հարկաբաժնում ընդունեց հայ կազմակերպությունների և կուսակցությունների ներկայացուցիչներին, վարչությունների և տիկնանց միության անդամներին, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ «ՀԱՅ ԿԵՆՏՐՈՆ»-ՈՒՄ

Սոավոտյան գործնական ընդունելություններից հետո, ժամը 12.30-ին Վեհափառ Հայրապետը «Հայ Կենտրոնում» մտերմական ճաշի հյուրն էր Տիկնանց Միության ոչ միայն վարչության, այլև բոլոր անդամների, որից հետո «Դուրյան» վարժարանի դահլիճում տեղի ունեցավ հանդիպում գաղութի հայ կանանց հետ, որը վերածվեց յուրահատուկ դասախոսության հայ կնոջ կատարած և կատարելիք դերի մասին հայ իրականության մեջ: Վեհափառ Հայրապետը կյանքի օրինակներով հատկապես կարևորեց մայրության գաղափարը, առանց որի կինը չի կարող կատարյալ երջանիկ լինել. «Մեր ժողովուրդը մայր բառով է կոչել իր բոլոր սրբությունները՝ Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Հայրենիք, որը խոսում է այն մասին, թե հարգանքի ի՞նչ մեծ և բարձր աստիճան ունի այն մեր հոգեբանության մեջ: Մայրությունը նվիրականագույն գաղափար է և այն պետք է սրբությամբ պահել»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕՋԱՍԿՈՅՈՒՄ

ԱՂՈԹՔ ԵՎ ՔԱՐՈԶ ՕՋԱՍԿՈՅԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ժամը 14.30-ին Վեհափառ Հայրապետը մեկնեց Սան Պաուլոյից ոչ շատ հեռու գտնվող Օջասկո քաղաք, որտեղ շուրջ 1000-ի հասնող հայություն է բնակվում:

Ժամը 15.00-ին Նորին Սրբությունը ժամանեց Օջասկո, ուր Հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու մուտքին Նորին Սրբությանը դիմավորեցին Օջասկոյի քաղաքապետ Սելսո Ջիլիոն, տեղի հոգևոր հովիվ Տեր Պողոս քահանան, թաղականության ատենապետ Ռոբերտ Բոշոդլանյանը, ներկայացուցչական մարմնի ատենապետ Հարություն Սեֆերյանը, թաղական խորհրդի անդամները և Օջասկոյի ողջ հայ բնակչությունը:

Եկեղեցու դարպասների դիմաց էլ քաղաքապետ Սելսո Ջիլիոն քաղաքի բանալին հանձնեց Վեհափառ Հայրապետին: Ապա, ավանդական աղ ու հացի օրհնությունից հետո, անցնելով ժողովրդի խուռներամ բազմության միջից, Նորին Սրբությունը «Հրաշափառ»-ով մուտք գործեց եկեղեցի և, գոհաբանական աղոթքից հետո, իր պատգամը տվեց հավատացյալ բազմությանը՝ պատգամելով մասնակցել եկեղեցու և Հայրենիքի վերաշինությանը ոչ թե օտարի պես, այլ սեփականի զգացումով. «Այսօր Եկեղեցին և Հայրենիքը կարիքն ունեն մեր բոլորիս անհատական մասնակցության ու ներդրման, մեր անձնական կյանքը խառնելով ընդհանրական կյանքին»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՍԵԼՍՈ ԱՆՏՈՆԻՈ ՋԻԼԻՈՅԻ ՀԵՏ ԵՎ ԲԱՑՈՒՄ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ «ԱՐՄԵՆԻԱ» ՀՐԱՊԱՐԱԿԻ

Հայ համայնքի հետ Եկեղեցում հանդիպելուց հետո, Վեհափառ Հայրապետը եկեղեցուն կից սրահում քաղաքապետ Սելսո Ջիլիոյի հետ միասին ներկա գտնվեց ի պատիվ իրեն կազմակերպված հանդի-

սությանը: Ներկայացված հայտագրից հետո ողջույնի և Օզասկո այցելության առիթով Վեհափառ Հայրապետին շնորհակալության խոսք ուղղեց քաղաքապետ Սելսո Ջիլիոն: Ապա Օզասկոյի հայ համայնքի անունից սրտի խոսք ասաց Թաղական խորհրդի ատենապետ Ռոբերտ Բոշոդլյանյանը, որին հաջորդեց Վեհափառ Հայրապետի խոսքը, որում Նորին Սրբությունը հորդորեց չապրել «անտարբերությամբ և անհոգությամբ, որոնք մարդու կյանքը դարձնում են եսակենտրոն և սահմանափակ, այլ ապրել վեհ գաղափարների և արժեքների իրագործման նախանձախնդրության, հոգևոր, բարոյական և մշակութային կյանքի որակային հատկանիշներով, առանց որոնց կյանքը կապականվի և ինքներս մեզ համար արդեն բեռ կդիտենք»:

Հանդիսությունից հետո քաղաքի կենտրոնում տեղի ունեցավ բացումը նորակառույց «Սրմենիա» հրապարակի, որը կապված էր Գարեգին Վեհափառի քաղաք այցելության հետ: Սելսո Ջիլիոն այն համարեց իր երախտագիտության արտահայտությունը հայ ժողովրդի նկատմամբ, որովհետև իր դժվար օրերին հայ բարեկամներն են միայն օգնել նրան: Ապա Վեհափառ Հայրապետը «Պահպանիչ» աղոթքով Ամենակալ Աստուծուց հայցեց այս քաղաքի թե՛ հայ և թե՛ օտարազգի բնակչության պահպանությունը, նրանց խաղաղ և ապահով կյանք մաղթելով:

ՕԶԱՍԿՈ ՔԱՂԱՔԻ Հ. 8371 ՀՐԱՄԱՆԱԳԻՐ
19 ՀՈՒԼԻՍԻ 1996

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա-Ի ԱՑՑԸ ՃԱՆԱՉՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՑՑ

Սելսո Անտոնիո Ջիլիո, Օզասկոյի քաղաքապետը, օգտվելով օրենքի սահմանած իրավունքից,

Նկատի ունենալով, որ առաջիկա Օգոստոսի 3-ին մեր քաղաքը կայցելի Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա-ը,

Նկատի ունենալով, որ տվյալ այցելությունը կարևոր իրադարձություն է, որը պատվում է ոչ միայն հայ համայնքին, այլ նաև հպարտության և ուրախության պատճառ է մեր քաղաքի համար,

Նկատի ունենալով, վերջապես, որ այցի պաշտոնական հանգամանքը պատճառ կդառնա, որ մեր Քաղաքապետարանն ու ընդհանրապես մեր ժողովուրդը Նորին Սրբությանն ընծայեն պատշաճ, արժանավայել և ջերմ ընդունելություն

ՈՐՈՇՈՒՄ Է

Հոդված 1. Ճանաչել պաշտոնական հանգամանքը Ն.Ս.Օ.Տ.Տ. Մայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց Գարեգին Ա-ի 1996 թ. Օգոստոսի 3-ին Օզասկո կատարելիք այցելության:

Հոդված 2. Այս հրամանագիրը ուժի մեջ կմտնի իր հրապարակման օրվանից:

Հոդված 3. Չեղյալ են համարվում բոլոր հակառակ տրամադրությունները:

Օզասկո, 19 Հուլիսի 1996

Սելսո Անտոնիո Ջիլիո
Քաղաքապետ

ՎԵՐԱԴԱՐՁ ՍԱՆ ՊԱՈՒԼՈ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ» ՀԱՆՁՆՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՊՐՆ. ՎԱՐՈՒԺԱՆ ԲՈՒՐՄԱՅԱՆԻՆ

Երեկոյան ժամը 20.30-ին Վեհափառ Հայրապետը ընթրիքի հյուրն էր Տեր և Տիկին Վարուժան և Տիրուհի Բուրմայանների: Հավաքվել էին համայնքի բոլոր ակնառու դեմքերը, կազմակերպությունների, միությունների ներկայացուցիչներ:

Ընթրիքի ընթացքում Վեհափառ Հայրապետը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով պարգևատրեց Վարուժան Բուրմայանին իր կատարած ազգաշեն և եկեղեցաշեն գործունեության համար՝ հատկապես նշելով այն փաստը, որ նա իր անմնացորդ մասնակցությունն է բերում «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործունեությանը և որպես իր հավատքի արտահայտություն ու վկայություն հիմնովին վերանորոգել էր Սան Պաուլոյի Սուրբ Գևորգ Մայր եկեղեցին: Ապա, Վեհափառ Հայրապետը մաղթեց, որ պրն. Բուրմայանն էլ ավելի եռանդով ծառայի ազգային-եկեղեցական կյանքում, որպես նախանձախնդիր հայ և քրիստոնյա:

4 ՕԳՈՍՏՈՍ, ԿԻՐԱԿԻ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհափառ Հայրապետը, առընթերակայությամբ Գյուտ և Գիսակ սրբազանների, եկեղեցականների և սկաուտների, մեծ թափորով, ամպհովանու ներքո մուտք գործեց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցի:

Սուրբ Պատարագին ներկա էին Սան Պաուլոյի քույր Եկեղեցիների ներկայացուցիչները:

Հընթացս Սուրբ Պատարագի քարոզեց Վեհափառ Հայրապետը՝ բնաբան ունենալով Հովհաննեսի Ավետարանի «Ես եմ հացն կենաց» տողը: Նորին Սրբությունը առանձնակի կերպով շեշտեց արժեքները ճիշտ գնահատելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Վեհափառ Հայրապետը, խոսելով այսօրվա ավելի ու ավելի աշխարհայնացող աշխարհի մասին, պատգամեց սեփական ձեռքով չկրկվել հոգևոր հացով սնվելուց: Եվ այդ հոգևոր հացը մեկ համար մեր Մայր Եկեղեցին ու Հայրենիքն են, առանց որոնց անիմաստ է մեր գոյությունն ու ապրած կյանքը. «Մեր հայությունը, որպես հացի բաժանված մասեր, կտորկտոր ցրված է ողջ աշխարհում, և այն հավաքողն ու ամբողջական բաղարջի վերածողը մեր Եկեղեցին ու ապատ Հայրենիքն են: Մոտենա՞նք և ամբողջանանք այդ բաղարջի մեջ և բաշխվենք աշխարհին: Այն ժամանակ է, որ կկգանք մեր ապրելու իմաստն ու բովանդակությունը: Մեր այսօրվա հոգևոր հացը մեր Տերն է՝ Հիսուս, և Իր Սուրբ Ավետա-

բանը և մոտենալով նրան կըմբռնենք Սուրբ Պատարագի ընթացքում երգվող խոսքերը, թե «Ճաշակեցէք և տեսէք, զի քաղցր է Տէր»: Այո՛, ճաշակենք և կտեսնենք, որ քաղցր է Տերը, որքան էլ Նրա բեռը ծանր լինի»:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ. ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՍԿԻՀԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է ԱՌԱՔՆՈՐԴ ՏԱԹԵՎ ՍՐԲԱԶԱՆԻՆ

Այնուհետև Վեհափառ Հայրապետը խոսք ուղղեց քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին՝ շնորհակալություն հայտնելով իրենց ներկայության և Հայոց Պատարագի ընթացքում միատեղ աղոթքի համար:

Հավարտ Սուրբ Պատարագի, ժամը 13.30-ին, Վեհափառ Հայրապետը մեծ թափորով և եկեղեցում ներկա հավատացյալների ուղեկցությամբ ծաղկեպսակ կետեղեց եկեղեցուց քիչ հեռու գտնվող «Նահատակաց հուշարձան»-ի առջև: Ապա հոգեհանգստյան աղոթքով Նորին Սրբությունը հայցեց Ամենակալ Աստծուց, որ լույսերի և խաղաղության մեջ պահի նահատակների հոգիները և դառնալով ժողովրդին պատգամեց կյանքով արժևորել նրանց նահատակությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՍԱՆ ՊԱՈՒԼՈ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

«Փառք և գոհություն կըննծայեմ Աստուծո, որ ինձի առիթը և շնորհը տվավ, որ անդրանիկ Հովվապետական, Հայրապետական այցելության ընթացքին առաջին Պատարագը մատուցեմ ամբողջ Հարավային Ամերիկայի այս ընդարձակ տարածքին վրա Բրազիլիո Սան Պաուլո քաղաքի Սուրբ Գևորգ եկեղեցիին մեջ: Որտի պարտք կզգամ աղոթելու ամբողջ Բրազիլիո Հանրապետության, նախագահին, կառավարության բոլոր հաստատությանց և ժողովրդին համար և նաև ամբողջ Հարավային Ամերիկայի տարածքին պպրող մեր սիրեցյալ, հավատացյալ, հավատարիմ հայ ժողովրդին համար:

Թող Աստված ծաղկեցնե այս երկիրը, որ եղավ մեր ժողովրդի հետեղեռնյան շրջանի ամենեն ավելի վառ օջախներեն մեկը հույսի,

վերակենդանության և վերածաղկումի: Պարտք կզգամ նաև այսօր իմ գնահատական խոսքն ուղղելու ձեր սիրեցյալ և նվիրյալ Առաջնորդին՝ Տ. Տաթև արքեպս. Ղաբիբյանին, հոգևորականներուն և թեմի Ներկայացուցչական ժողովի, Կենտրոնական Վարչության և բոլոր այն եկեղեցական, համայնքային կազմակերպություններուն, բարեսիրական, կրթական, երիտասարդական, դաստիարակչական, մշակութային կազմակերպություններուն, որոնք մեր ժողովուրդին կյանքը այս մեծ երկրին մեջ կպահեն աշխույժ և հավատարիմ իրենց հայրերու դարավոր ոգիին, արյան մեջեն անցած և կրակով բյուրեղացած քրիստոնեական հավատքին և մեր տոկունության, ազգային ինքնության ու արժանապատվության գիտակցության: Նաև պարտք կզգամ գնահատանքի և սիրո խոսք ուղղել մեր սիրեցյալ այն հոգևորականներուն, որոնք այսօր կներկայացնեն ուրիշ Եկեղեցիներ և հաղորդակից կդառնան մեզի:

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

«Ես եմ հացն կենաց»

Այսպես պատգամեց, այսպես խոսեցավ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս: Նա Իր ամբողջ առաքելության ընթացքին երկրի վրա, հաճախ խոսեցավ հացի մասին: Հացը բազմացուց և 5000 հոգիների բաշխեց, Տերունական աղոթքի մեջ ասաց. «Զհաց մեր հանապազորդ, տուր մեզ այսօր»:

Սիրելի հավատացյալներ, նյութեղեն հացը խորհրդանիշն ու միջոցն է մեր ֆիզիկական կյանքի առողջության, շարունակության և տոկունության: Առանց հացի ոչ ոք կրնա ապրիլ: Հացը՝ հողեն եկող հացը, Աստուծո տուրքն է, բարիքն է մեզի: Բայց ի՞նչ կհասկնանք, մանավանդ ի՞նչ կհասկնար Հիսուս հաց ըսելով. միայն մեր սեղաններուն վրա եղող նյութեղեն հա՞ցը: Հացը Ավետարանին մեջ երեք կարևոր իմաստներ ունի: Մարմնեղեն մեր գոյության համար ցորենեն եկող նյութն է, որ կենսունակություն կուտա մեր մարմնին, և երկրորդ, հացը իմացական մտավոր լույսն է՝ կյանքն է, մեկ խոսքով հացը մարդու իմացական կյանքին սնունդ գիտությունն է: Երրորդ, հոգևոր հացը. եթե ֆիզիկական հացը մեր մարմնին համար է, իմացականը մեր ուղեղին համար, ապա հոգևոր հացը մեր հոգիին համար և անոր թոնիրը Սրբազան Եկեղեցին, Ավետարանը, Քրիստոսի քարոզած ճշմարտություններն են, որոնք մեր հայրերը դարե՛ր-դարե՛ր շարունակ ապրելով մեզի փոխանցած են այս Սուրբ Եկեղեցիին խորանեն: Տեսե՛ք, քիչ ետքը պիտի երգեն. «Մատի՛ք առ Տէր եւ առէք զլոյս, ճաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է»:

Եթե չճաշակես այդ հոգևոր հացը՝ աղոթքը, Հիսուսի հաղորդությունը, չես կրնար հասկնալ անոր հոգևոր ուժը, որ մարդս տոկուն կպահե բոլոր տեսակի չարիքներուն դիմաց: Եթե մեկը նյութական հացի առատության մեջ ապրի և բարձր գիտական զարգացում ունենա և ուսումնական ըլլա, բայց հոգևոր հաց չունենա, դարձյալ թերի է, որովհետև ոչ մարմինը և ոչ էլ միտքը գինք կփրկեն, այլ այն գաղափար, որ ինքը Աստծուց է, ինչ որ

է: Աստված է բարիքներու աղբյուրը, և եթե մարդը կկտրվե իր Արարիչեն, ինքզինքը ուրացած կըլլա: Եվ ատոր համար հոգևոր հասկացությունը ավելի ծանր է, քան նյութականը: Սա կնշանակե չգիտնալ կյանքին իմաստը, որի համար Հիսուս կըսե. «Մարդ ոչ միայն հացի կեցցէ, այլեւ բանիւն Աստուծոյ»: Միշտ է, որ մարդ չի կրնար ապրիլ առանց հացի, բայց մարդ չի կրնար ապրիլ միայն հացով: Մեր Եկեղեցին այդ հոգևոր հացն է, որ կուտա մեզի Ավետարանեն քաղելով և կփոխանցե մեր հայրերուն ընկալումներն ու ավանդությունները, և ատոնք են, որ մեր սերունդներուն կերակուր կդառնան: Բոլոր տեսակի հալածանքներուն և չարչարանքներուն դիմաց Աստուծո տված հոգևոր հացը՝ հավատքն ու հույսն են, որ կպահեն և կապրեցնեն մեզ: Սովը, անոթությունը անհավոր տառապանք է, բայց երբ մեր հացը պակսեցավ, այդ հացին դիմացը հոգևոր, գաղափարական, հավատքի ուժեն խմորված գիտակցությունը կյանքի մասին հացի վերածվեցավ: Սա մարդուս կուտա հաղթանակի ու հավերժության գաղտնի բանալին, և այդպես ապրեցավ մեր ժողովուրդը:

Սիրելի հավատացյալներ, անկեղծ ըլլանք, ինքնատես ըլլանք և ինքզինքիս չխաբենք: Այսօր հացի առատություն ունենք, մանավանդ Սփյուռքին մեջ որո՞ւն հաց կպակսի: Բայց այս օրերուն նյութական առատությունը հոգևոր աղքատություն կդառնա. ուրախ եղեք, բարեկեցիկ եղեք, բայց երբեք մի բաժնվեք իմացական և հոգևոր հացեն, այլապես նյութական հացի հարստության մեջ կաղքատանաք: Եվ ատոր համար այսօր մեր ազգին ամենեն կարևոր պահանջքներեն ու կարիքներեն մեկը վերարթնացումն է իր իմացական և հոգևոր կյանքին: Ո՞ւր է մեր զորության աղբյուրը. եկեղեցին, դպրոցը, մեր միություններն ու կազմակերպություններն են, միասին ըլլանք և այնտեղ է, որ Աստուծո փառքը կուգա մեզի և կպատվենք զԱյն մեր եկեղեցական աղոթքներով, դպրոցական երգերով ու արտասանություններով, որոնք իմացական հացին բաշխումն են, ինչպես Սուրբ Խորանեն Հաղորդությունը հոգևոր հացի բաշխումն է: Հետևաբար, գնահատելով հանդերձ ձեր բոլոր կատարած գործերը, ես եկած եմ, որպեսզի հոգևոր հացին խմորը շատցնեմ: Եվ հացը եփվի ձեր եկեղեցիներու, դպրոցներու մեջ, ձեր հոգևորականներու կողմն, իսկ դուք էլ զգաք ու ընդառաջեք:

Սիրելիներ, այսօր երկար և ծանր բոնատիրությունեն հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր Հոգևոր Մեմարանով, երիտասարդ եկեղեցականներու պատրաստությամբ, կրոնքի դասերու ավանդումով, ուսուցիչներու պատրաստությամբ լծված է այդ հացը թխելուն, հացը խմորելուն՝ հոգևոր հացը մեր ժողովուրդին տալու համար: Հավատքեն և Աստուծո գիտակցությենեն եթե պարպվինք, մեր կյանքը բարոյականորեն կքայքայվի, այլևս բարոյական սկզբունք չի մնար, երբ զԱստված կմոռնանք: Կյանքը իմաստ կառնե Աստուծմով և կերջանկացնես ուրիշ մեկին, երբ անոր հետ եղբայրության մեջ կապրիս:

Ահավասիկ, սիրելի բարեկամներս, եկած եմ Հայաստանեն ձեզ անհանգիստ ընելու՝ ջուրերը խառնելու: Եկած եմ Մայր Աթոռ Սուրբ

Էջմիածնեն, որուն համար ես կրսեմ սպունգ մը է հավատքին: Մտի՛ր ներսը, դիպիր քարին, դիտե՛ ու հավատքը քեզի կուգա սպունգի ջուրին նման: Եկեք այս հավատքով վերանորոգինք մենք զմեզ և մեր Հայաստանի Հանրապետության անկախության այս նոր շրջանը հոգևոր վերարթնության, բարոյական տոկունության շրջանի մը վերածենք, որովհետև Հայրենիքը միայն դրամով չի շինվի, այլ այն կկերտվի բարոյական հասկացողության առողջ սկզբունքներով: Եվ ատոր համար Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ձեր հոգևոր հայրը, եկել է, որպեսզի հավատքը շարժի ձեր մեջ ասելով. «Արթնցե՛ք, ինքնագիտակցության եկեք և մեր հայության կյանքը Բրազիլի և Սան Պաուլոյի այս նահանգում ըրեք այնպես, որ ձեր զավակները օրհնեն ձեզի, գեղեցիկը ժառանգեն ձեզմե և վերանորոգված գաղութ մը ըլլաք վերանորոգված մեր ազգի կյանքի մեջ Աստուծո փառքին համար: Հացը առատ է հոգևոր, «մատիք առ Տէր եւ առէք զլոյս, ճաշակեցէ՛ք...» հավատքին հացը և այն ատեն կտեսնեք անոր համը մեր Սուրբ Եկեղեցվո պայծառության, մեր ազգի վերաշինության համար հավիտյանս հավիտենից: Ամեն»:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԳԸՍԱՃԳՅԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՈՂՄԻՑ

Կեսօրին, Սուրբ Պատարագից հետո, Վեհափառ Հայրապետը ճաշի հյուրը եղավ վաղեմի բարեկամ Գրսաճգյան ընտանիքի: Հյուրասիրությանը ներկա էին գաղութի բոլոր կազմակերպությունների, կուսակցությունների և միությունների պատասխանատուներն ու ներկայացուցիչները: Այս ճաշկերույթը պաշտոնականից առավել մտերմական էր:

Այստեղ Վեհափառ Հայրապետը վեր հանեց և հայրական սիրով գնահատեց Գրսաճգյան ընտանիքի մատուցած ծառայությունները հայրենաշինության և եկեղեցաշինության գործում: Նորին Սրբությունը շեշտեց, որ այսօր, ավելի քան երբեք, Հայրենիքն ու Եկեղեցին կարիքն ունեն իրենց զավակների առավել նվիրումին:

ՈՂՋԵՐԹԻ ԸՆԹՐԻՔ «ՄԱՔՍՈՒԴ ՓԼԱՋԱ» ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՄԵԾ ԳԱՀԼԻՃՈՒՄ

Երեկոյան ժամը 21.30-ին «Մաքսուդ Փլաչա» հյուրանոցի մեծ դահլիճում ողջերթի ընթրիք էր կազմակերպվել ի պատիվ Վեհափառ Հայրապետի, որին ներկա էին Ազգային Ներկայացուցչական Ժողովի և Կենտրոնական Վարչության անդամները, պետական-պաշտոնական անձնավորություններ, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներ, համայնքի բոլոր կազմակերպությունների և միությունների անդամները:

Պատվո սեղանին Վեհափառ Հայրապետի կողքին հաջորդականությամբ տեղ էին գրավել Սան Պաուլոյի կարդինալ Էմիսեիա Կարդիալը, Բրազիլիայի Ֆինանսների նախարար՝ ազգությամբ հայ Անտոնիո

Կանդիրը, Թեմի Առաջնորդ Տաթև արքեպս. Ղարիբյանը, ծերակուտականներ Ռոմեո Տուման, Ժոզեֆ Սերան և Ռոբսոն Տուման, Սկզբային Ներկայացուցչական ժողովի ատենապետ դոկտ. Վարուժան Բուրմայանը, Կենտրոնական Վարչության ատենապետ դոկտ. Բենիամին Դիլեկելյանը, Արևմտյան Եվրոպայի Հայրապետական պատվիրակ և Փարիզի Առաջնորդ Գյուտ արքեպս. Նազգաջյանը, Արգենտինայի Հայոց Առաջնորդ Գիսակ եպս. Մուրադյանը, Բրազիլիայի կաթոլիկ հայերի հոգևոր պետ Վարդան եպս. Պողոսյանը, Նահանգապետի ներկայացուցիչ Ֆերնանդո Գասպարյանը, Բրազիլիայում Հույն Եկեղեցու Առաջնորդ և Տիեզերական Պատրիարքի ներկայացուցիչ Անաստասիոս Ցակինիսը, Մարոնիտ Եկեղեցու հոգևոր հովիվ Ռոմ Մահֆուզը, Օլասկոյի քաղաքապետ Սելսո Ջիլիոն, Բրազիլիայում Ռուսաստանի դեսպան Վալենտին Ալյոխինը, Բրազիլիայում Սիրիայի դեսպանը, Սան Պաուլոյի քաղաքապետի ներկայացուցիչ Միգել Կոլասուոնդը, Արգենտինայում << դեսպանության երկրորդ քարտուղար Ռուբեն Մուլյանը, «Սուրբ Գրիգոր Լուսավորչ»-ի շքանշանակիր Գառնիկ Բալարյանը:

Հանդիսությունը բացվեց դոկտ. Վարուժան Բուրմայանի ողջույնի և շնորհակալության խոսքով, որից հետո Վեհափառ Հայրապետն օրհնեց սեղաններն ու հավաքված բազմությանը:

Այնուհետև, հանուն Բրազիլահայոց թեմի, երախտագիտության խոսք ասաց Առաջնորդ Տաթև արքեպս. Ղարիբյանը, որին հաջորդեցին Կարդինալ Կարդիալի և Նախագահի ներկայացուցիչ Անտոնիո Կանդիրի խոսքերը:

Ապա, հանուն Բրազիլիայի հայ ժողովրդի, Կենտրոնական Վարչության ատենապետ Բենիամին Դիլեկելյանը արծաթյա ափսե նվիրեց Նորին Սրբությանը՝ ի հիշատակ Հայրապետական այցելության:

Վերջում իր պատգամն ու օրհնությունը տվեց Վեհափառ Հայրապետը:

Նախ Նորին Սրբությունը, անգլերենով խոսք ուղղելով Բրազիլիայի և այլ երկրների պետական ներկայացուցիչներին, քույր Եկեղեցիների հոգևորականներին, շնորհակալություն հայտնեց այստեղ ներկայության և սրտակցության համար, ապա հատուկ կերպով շնորհակալություն հայտնեց Բրազիլիայի պետությանն ու նրա նախագահին՝ հայությանը այսքան ջերմ ընդունելու համար:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը, խոսքն ուղղելով իր հոտի վավակներին, շեշտեց մի կարևոր հանգամանք, որ իրական կյանքը սոսկ ուտելով, խմելով նյութական հարստությամբ ապրելը չէ, այլ արժևորելով ապրելը. «Մենք պետք չէ մեր ունեցվածքի վոհը դառնանք, այլ նրա տերը: Դուք այս երկրում հասել եք բարեկեցիկ կյանքի, որը շատ լավ է, բայց մի՛ տարվեք այդ նյութական հարստությամբ: Արժեքը, գաղափարը հայտնելու մեջ չէ, այլ այն գործի վերածելու մեջ: Մեր ինքնությունը հաստատենք և ամրացնենք գործով և մեր կյանքը վերածենք ինքնատվչության Մայր Եկեղեցու և Հայրենիքի ծաղկման գործին ի

նպաստ: Մենք ունենք մեկ Մայր Եկեղեցի և Հայրենիք, բայց այդ մայրությունը արժևորենք մեր որդիությամբ և մոր հանդեպ ունեցած պարտականություններով: Համարձակորեն ստանձնենք այդ պարտականությունները և մեր փոքրիկ իսկ մասնակցությամբ շինություն և պայծառություն բերենք այս երկու սրբություններին», եզրափակեց Վեհափառ Հայրապետը:

Վերջում Վեհափառ Հայրապետի աղոթքով ավարտվեց այս մեծաշուք հանդիսությունը, ինչպես նաև Բրազիլիա կատարած Հայրապետական և Հովվապետական այցելությունը:

ՄԵԿՆՈՒՄ ԲՐԱԶԻԼԻԱՅԻՑ

Օգոստոսի 5-ին, ավարտելով Բրազիլիահայ գաղութ կատարած Հովվապետական այցելությունը, Վեհափառ Հայրապետը առավոտյան ժամը 10.00-ին պետք է մեկներ Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեո՝ Հովվապետական այցելության երկրորդ հանգրվանը: Սակայն ինքնաթիռի ուշացման պատճառով այն հետաձգվեց, որի պատճառով էլ նախատեսված երկօրյա ծրագիրը ձախողվեց, և Վեհափառ Հայրապետը ընդամենը մեկ օր կարողացավ լինել Ուրուգվայի հայ ժողովրդի իր զավակների հետ: